ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱ ՍԱՀԱԿԵԱՆ

ՉՈՐՔ-ՄԱՐՋՈՒԱՆԻ ՈՒԽՏԱՎԱՅՐԵՐԻ ԱՆՈՒԱՆ ԵՒ ԳՏՆՈՒԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ ՇՈՒՐՋ

Չորք-Մարզուան[1] բերդաքաղաքը գտնուում է Կիլիկիայի Ճկէր գաւառում: Հայաշատ այս վայրի մասին կարեւոր տեղեկութիւններ կան Հայր Ղեւոնդ Ալիշանի «Սիսուան» ստուարահատոր աշխատութեան մէջ:

Ղ. Ալիշանը, ուսումնասիրելով ճամփորդական գրութիւններ եւ պատմական կարեւորութիւն ներկայացնող փաստաթղթեր, արժէքաւոր տեղեկութիւններ է հաղորդում գաւառի ամրոցների, բերդերի, բերդաքաղաքների, բնակչութեան թուաքանակի եւ այլ մանրամասների մասին:

Լեւոն Մեծագործ թագաւորի՝ 1216 թ. ապրիլի 23-ին Տարսոնում տուած գրաւագրի համաձայն՝ Կիլիկեան Հայաստանի թագաւորը, երկու տարուայ պայմանաժամկէտով, Ճկէր գաւառը՝ իր տասը բնակավայրերով (տասն տեղիք, զօրս նոցին սարօք՝ եւ ի նմին գաւառի) յանձնում է Հիվանդախնամ ասպետներին՝ դրա դիմաց ստանալով քսան հազար սառակիներեան բիւզանդ, որը պէտք է յանձնէր իբրեւ պաշտատական (օժիտ) իր Ռիտայ անունով դստէր ամուսնութեան համար[2]:

Ղ. Ալիշանի բերած տեղեկութիւնների համաձայն՝ Չորք-Մարզուան տեղանունը Էուկ-մարգեպան ձեւով յիշատակում է վերը նշուած տասը բնակա-

1 Դյորդ-Եոլ, Տէօրթեոլ, Դորտ-Եոլ, Ճուկ Մարզպան, Չոր-Մերզմէն, Ճուկ Մերզմէն. Ճուկ Մարզպան, Չորէ-Մարզպա, Չորք-Մարզպան, Չորք-Մարզպանք, Չորք-Մարզուան, Չորք-Մարզուանք, Ումրանիյէ, արեւմտահայերէն՝ Տէօրթեօլ գիւղաքաղաքը գտնում է Կիլիկիայում՝ Ադանայ նահանգում, Սեւ լեռների փեշերին, Դելի չայ կոչուող գետի մօտ, Բինարես լեռան ստորոտին: Բնակավայրը թուրքական աղբիւրներում յիշատակում է Դյորթեօլ ձեւով՝ քաղաքը չորս մասի բաժանող քառուղին նկատի առնելով: 1910 թ., ի թիւս այլ հայկական բնակավայրերի, Չորք Մարզուանը եւս կրում է անուանական փոփոխութիւն՝ դառնալով Ումրանիյէ: Սակայն, քանի որ Սիրիա նահանգում եւս կար նոյնանուն մի բնակավայր, փոստային գործերում առաջանում էին դժուարութիւններ: 1912 թ. բնակավայրը վերանուանւում է Դէօրթեօլ: Ներկայումս գտնում է Թուրքիայի Հանրապետութեան Հաթայ նահանգում:

2 Տե՛ս **Վ. Մ. Ալիշան**, Սիսուան, Համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, Ս. Ղազար, 1885, էջ 411:

վայրերի շարքում[3], ընդ որում, Էուկ-մարզեպան բերդաքաղաքում հայ բնակչութեան թիւը 150 տուն էր, նրան յարակից Օշաքլուում՝ 150, իսկ Էօզերլիում (Էիւզլեր)՝ 120[4]:

Հայկական այս երեք բնակավայրերը օսմանեան շրջանում մաս են կազմել Ադանայի գաւառի[5] (սանջաք) Չորք-Մարզուան գաւառակի (կազա), որը աւելի ուշ վերանուանւում է նախ Ումրանիյէ, ապա՝ Դէորթեօլ:

Բացի Ալիշանից, այս բնակավայրի վերաբերեալ կարեւոր տեղեկություններ են փոխանցել նաեւ Սմբատ Գունդստաբլը, Վիլլեբրանդտ լատին եպիսկոպոսը՝ պատմագրական յուշերի մէջ:

Ինչ վերաբերում է Չորք-Մարզուանի հայկական եկեղեցիներին եւ դրանց կառուցման թուականներին, պատմագրութեան փոխանցած տեղեկութիւնները բաւական ժլատ են: Աւելին՝ գիտական ուսումնասիրութիւններ կամ պեղումներ այստեղ երբեւէ չեն իրականացուել:

Հայկական այս բնակավայրի վերաբերեալ ցայսօր ունենք երկու տպագիր յուշագրութիւն. Մինաս Խապրիկի «Եթէ Չորք-մարզպանը ինծի հետ խօսէր...» (Պէյրութ, 1983 թ.), եւ Մինաս Գոճայեանի «Պատմութիւն Չորք-մարզպանի, (Տէօրթ-եոլ) գիւղաքաղաք մը Կիլիկիոյ մէջ» (Լոս Անճելըս, 2006 թ.) գրքերը: Մնացեալ աղբիւրները թռուցիկ են անդրադառնում Չորք-Մարզուանի եկեղեցիներին՝ հաղորդելով կցկտուր, երբեմն էլ ոչ ճիշտ տեղեկութիւններ: Դրանցից մէկն օրինակ՝ Ս. Մ. Ծոցիկեանի «Արեւմտահայ աշխարհ» ուսումնասիրութիւնն է: Գրքում հեղինակը գրում է, որ Չորք-Մարզուանը ունեցել է երկու եկեղեցի՝ մէկը Հայաստանեայց Առաքելական, միւսը՝ Աւետարանական[6]:

Ծանօթանալով բնիկ չորք-մարզուանցի, Քելեկեան որբանոցի շէնքերից մէկի յատակագծի հեղինակ Սամուէլ Պոռանեանի շուրջ 500 էջանոց անտիպ յուշագրութեան հետ՝ նկատեցինք, որ մի շարք հարցերում, տպագրուած աղբիւրների հետ համեմատած, կան անհամապատասխանութիւններ: Սոյն յօդուածի շրջանակում արուած ուսումնասիրութեան արդիւնքում ձեռք բերեցինք եւս մէկ ձեռագիր, որի հեղինակին, ցաւօք, չկարողացանք պարզել:

Մեր ձեռքի տակ են նաեւ 1905-1909 թթ. Ադանայի առաջնորդ Մուշեղ Ծ. վրդ. Սերոբեանի ինքնակենսագրութիւնից մի քանի թուայնացուած էջեր, որոնք եւս անտիպ են:

---

3 Տե՛ս անդ:

4 Տե՛ս անդ:

5 Ադանայի գաւառներն են՝ Մերսին, Ջեբել Բէրէքէթ, Կոզան, Իչ-իլ: Այս գաւառում եղել է 15 գաւառակ, 21 գիւղախումբ, 1632 գիւղ, 25 եկեղեցի. տե՛ս «Ընդարձակ տարեցոյց Ազգային հիւանդանոցի», Կ. Պոլիս, 1901, էջ 366:

6 Տե՛ս **Ս. Մ. Ծոցիկեան**, Արեւմտահայ աշխարհ, Նիւ Եորք, 1947, էջ 737-738:

Վստահ ենք, որ ձեռագիր մատեաններում նոյնպէս ներփակուած պէտք է լինեն սրբավայրերի մասին հետաքրքիր յիշատակումներ, որոնք երբեւէ երեւան գալով՝ նոր լոյս կսփռեն տարածաշրջանի հոգեւոր կեանքի եւ եկեղեցաշինութեան վրայ:

Աւելի քան համոզուած ենք, որ հայաբնակ այս վայրերի գիտական ուսումնասիրութիւններն ու պեղումները երեւան պէտք է հանեն պատմագրութեան համար կարեւոր ու բացառիկ տեղեկութիւններ, քանի որ, ինչպէս վկայում են այստեղ ապրած հայերը, այս վայրերում հայկական անցեալի հետքերը ամէնուր են: Այս առիթով Սամուէլ Պոռանեան յուշագիրը գրում է. «Այստեղ հայոց պատմութեան հետքերը սպասում են իրենց լուսաբանմանը: Նման ենթադրութեան ենք հակուել Զաբել թագուհու պարտէզում, որը ներկայումս ծառայում է իբրեւ թուրքական գերեզմանատուն, թաղման արարողութեան ընթացքում երեւան ելած երկու սափոր արծաթ դրամների պարագայի հիման վրա: Առաջինը Լեւոն Բ.-ի, իսկ երկրորդը՝ Հեթում Ա.-ի արծաթ դրամներով լեցուն է»[7]: Իսկ Թէոդիկի փոխանցած տեղեկությունների համաձայն՝ 1873 թ. մի քուրդ բոլորովին պատահաբար գտնում է նաեւ Լեւոն Ե. թագաւորի սուրը[8]:

Յայտնի է, որ Օսմանեան տիրապետութեան շրջանում եկեղեցիների կառուցման համար հարկաւոր էր ստանալ թոյլտուութիւն՝ ֆերման (հրովարտակ)[9]: Չորք-Մարզուանում կառուցուած եկեղեցու՝ Ս. Աստուածածնի վերաբերեալ Մինաս Գոճայեանը գրում է, որ այն ունեցել է մեծ գմբէթ, եւ հաւելում՝ Դէօրթեօլի երեւելիները մեծ ջանքեր են թափել հրովարտակ ստանալու եւ գմբէթարդ եկեղեցի կառուցելու համար[10]: Միւս աղբիւրները, որոնք գրի են առնուել աւելի վաղ, Ս. Աստուածածին եկեղեցու վերաբերեալ նման տեղեկութիւններ չեն հաղորդում:

Հեղինակի ներկայացրած մանրամասնութիւնները մեզ ստիպեցին ուշադրութիւն դարձնել վերոնշեալ եկեղեցու կառուցման համար արձակուած հրովարտակին՝ գտնելու այլ տեղեկութիւններ եւս:

Իբրեւ կանոն, հրովարտակի օրինակներից մէկը պահում էր այն անձի մօտ, ում տրում էր, իսկ միւսը՝ պետական պահոցում: Նման փաստաթղթեր

7 Տե՛ս **Սամուէլ Պոռանեան**, Յուշագրութիւն Ճուկ Մարզեպանի, Լենինական, 1965, անտիպ, էջ 144:

8 Տե՛ս **Թէոդիկ**, Ամենուն Տարեցոյցը, Կ. Պոլիս, 1905, էջ 49:

9 Ըստ Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատութեան եւ դաւանանքների նախարարութեանը ներկայացուած հայկական եկեղեցիների եւ վանքերի ցուցակներում ու թաքրիրներում (ծանուցագիր) արուած նշումների՝ Օսմանեան կայսրութեան եկեղեցիները բաժանուել են երկու մասի՝ ֆերմանով հաստատուած եւ առանց ֆերմանի: Ցուցակների մասին մանրամասն տե՛ս «Էջմիածին» ամսագրի 1965-66 թթ. համարներում՝ Ա. Սաֆրաստեանի յօդուածներում:

10 Տե՛ս **Մինաս Գոճայեան**, Պատմութիւն Չորք-Մարզպանի, (Տէօրթ-Եոլ) գիւղաքաղաք մը Կիլիկիոյ մէջ, Լոս Անճելըս, 2006, էջ 143:

ներկայումս պահում են Վարչապետութեան Օսմանեան եւ Հանրապետական արխիւներում (Başbakanlık Osmanlı Arşivi, Başbakanlık Cumhuriyet Arşivi): Ոչ քրիստոնեայ բնակչութեանը վերաբերող եկեղեցական որոշումներ եւ կարեւոր տեղեկութիւններ են ամփոփուած նաեւ եկեղեցական մատեաններում (kilise defterleri), որոնցում վկայութիւններ կան սրբավայրերի կառուցման եւ վերանորոգման, դրանց առընթեր դպրոցների փակման կամ բացման, հոգեւորականների նշանակման, եկեղեցական հարկերի, տուրքերի վերաբերեալ: Նման հրովարտակների օրինակներ պահում են նաեւ Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանում, սակայն այստեղ եւս Չորք-Մարզուանի վերաբերեալ գրութիւններ չկան:

Վերը նշուած միւս պահոցները փակ են հայ ուսումնասիրողների առջեւ, հետեւաբար՝ առայժմ անմատչելի:

Առաջնորդուելով բազմավաստակ Ա. Սաֆրաստեանի՝ «Էջմիածին» ամսագրում տպագրած եկեղեցիների, վանքերի թէզքէրէների (պաշտօնական գրութիւն) եւ ցուցակների մասին յօդուածով՝ փորձեցինք գտնել օգտագործուած օսմաներէն փաստաթղթերի բնօրինակները: Հեղինակը դրանց գտնուելու վայրի մասին հաղորդում է հետեւեալը. «Այդ ցուցակները եւ թաքրիրները[11] պահում են Երեւանի Հանրային գրադարանի թուրքերէն գրքերի շարքում՝ 1-47 համարների ներքոյ»[12]: Հաւանաբար այն ժամանակ, երբ Ա. Սաֆրաստեանը աշխատել է այս ցուցակների վրայ, դրանք պահուել են Հանրային գրադարանում, իսկ աւելի ուշ՝ տեղափոխուել, սակայն թէ ուր՝ չկարողացանք գտնել: Դրանք չկային ո՛չ Հայաստանի Ազգային գրադարանում, ո՛չ Մատենադարանում, ո՛չ էլ Ազգային արխիւում:

Մնում է գոհանալ այն իրողութեամբ, որ գոնէ տպագրուել եւ պահպանուել են նշուած փաստաթղթերի թարգմանութիւնները:

Ըստ այս փաստաթղթերի՝ Կ. Պոլսի պատրիարքարանը եկեղեցիների ու վանքերի մասին տեղեկութիւնները ստացել է նահանգների եւ քաղաքների հայոց առաջնորդներից: Այս հանգամանքը հաշուի առնելով՝ Ա. Սաֆրաստեանը համարում է, որ վանքերի եւ եկեղեցիների ցուցակները, դրանցում տեղ գտած տեղեկութիւնները ունեն պատմական ճշտութիւն՝ մասնաւորաբար կառուցման թուականների առումով[13]:

Սակայն, տուեալ վայրերում ապրած հայերի յուշագրութիւնների տեղեկութիւնները, հայ ուսումնասիրողների կազմած՝ եկեղեցիների մասին ցու-

11 تقریر Բարձրագոյն Դռանը ուղղուած պաշտօնական գրութիւն:
12 «Էջմիածին» ամսագիր, 1965, Ա., էջ 40:
13 Անդ, էջ 41:

Տեօրթեօլ, 1912 թ. Գրերի գիւտի տօնակատարութիւն՝ Սահակ Բ. Կաթողիկոսի ներկայութեամբ

Տեօրթեօլ, 1902 թ. Ազգային Կեդրոնական վարժարանի շրջանաւարտներու վկայականաց բաշխման հանդէս

Տեօրթեօլի Ս. Աստուածածին եկեղեցին

ցակները, այդ փաստաթղթերում ներառուած գրութիւնները յաճախ միմեանց չեն համապատասխանում[14]:

1995 համարը կրող՝ հիջրայի 1330 թ. փետրուարի 16-ին կազմուած եկեղեցիների ցուցակի համաձայն՝ Ումրանիյէ[15] վարչական շրջանի Չորք-Մարզուան գիւղաքաղաքում եղել է չորս եկեղեցի:

1. Ադանայի նահանգի Ումրանիյէ գաւառակի Էօզերլի գիւղում Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի՝ կառուցուած հիջրայի 1294 թ. (1877-1878):

2. Ադանայի նահանգի Ումրանիյէ գաւառակի Չոքմերզէն գիւղում Ս. Աստուածածին եկեղեցի՝ կառուցուած հիջրայի 1267 թ. (1851-1852):

3. Ադանայի նահանգի Ումրանիյէ գաւառակի Չոքմերզէն գիւղում Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի՝ կառուցուած հիջրայի 1274 թ.(1858):

4. Ադանայի նահանգի Ումրանիյէ գաւառակի Օջաքլու գիւղում Ս. Աստուածածին եկեղեցի՝ գոյութիւն ունի հնուց[16]:

Եկեղեցիների թուաքանակի վերաբերեալ Մինաս Գոճայեանը նոյնպես գրում է, որ Չորք-Մարզուանը ունեցել է երեք եկեղեցի, որոնցից առաջինը եւ հնագոյնը գերեզմանատանը կառուցուած Ս. Մինաս եկեղեցին է, յաջորդը՝ Ս. Աստուածածինը, երրորդը՝ Ս. Խաչ եկեղեցին[17]: Բացի այդ, հեղինակը նշում է, որ Օջաքլու գիւղը եւս ունեցել է իր եկեղեցիները, որոնք, սակայն, քանդուել են 1895 թ. համիդեան կոտորածների ընթացքում[18]:

Իր հերթին Սամուէլ Պոռանեանը Չորք-Մարզուանում յիշատակում է Ս. Աստուածածին եւ Ս. Փրկիչ կամ Վերին ու Վարին կոչուող եկեղեցիները[19],

---

14 Հ. Հ. Ոսկեանի «Կիլիկիայի վանքերը» աշխատութեան մէջ որեւէ խօսք չկայ Ադանայի եկեղեցիների վերաբերեալ: Մաղաքիա Օրմանեանը «Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը» (Կ. Պոլիս, 1912) գրքում անդրադառնալով Կիլիկիայի աթոռին եւ ներկայացնելով Ադանայի արքեպիկոպոսական վիճակը՝ գրում է, որ այն (Ադանայ) ընդգրկում է Ադանայ, Մերսին եւ Իչիլի գաւառները (թաղ՝ 16, եկեղեցի՝ 12, հայ՝ 30 000, կաթոլիկ՝ 1000, բողոքական՝ 200). տե՛ս էջ 207: Կ. Պոլսի պատրիարքարանի կազմած ցուցակներում վերը նշուած երեք գաւառի եկեղեցիների թիւը հասնում է տասի: Ըստ «Ազգային տարեցոյցի»՝ 1901 թ. դրութեամբ Ադանայի եւ Բէրէքէթ գաւառի եկեղեցիների թիւը հասնում է 23-ի (տե՛ս «Ընդարձակ տարեցոյց Ազգային հիւանդանոցի», 1901, էջ 410), իսկ ըստ Կ. Պոլսի պատրիարքարանի ցուցակների՝ նշուած գաւառների եկեղեցիների թիւը հասնում է 25-ի, որից 21-ը՝ առանց ֆերմանի, իսկ 4-ը՝ ֆերմանով հաստատուած. տե՛ս «Էջմիածին» ամսագրի նշուած յօդուածները:

15 Փաստաթղթերում նշուած է Ումրանիյէ գաւառակ, քանի որ այդ ժամանակ արդէն Չորք-Մարզուանը հակահայկական նկատառումներով անուանափոխուել էր:

16 Մինաս Խապրիկը, ով բնիկ Օջաքլուից էր, գրում է, որ այս գիւղի միակ դժբախտութիւնը եկեղեցի չունենալն էր: Նորակառոյց եկեղեցին անաւարտ է մնացել, քանի որ վէճ է ծագել Պոյաճեան եւ Կէօքչեան գերդաստանների միջեւ: Եկեղեցական ծէսերը բաց չթողնելու համար կառուցում է փայտէ սիւներով եւ ձեղուններով տնակ. տե՛ս **Մինաս Խապրիկ**, Եթէ Չորք-մարզպանը ինձի հետ խօսէր..., Պէյրութ, 1983, էջ 50:

17 Տե՛ս **Մինաս Գոճայեան**, նշ. աշխ., էջ 142-143:

18 Անդ:

19 Տե՛ս **Սամուէլ Պոռանեան**, նշ. աշխ., էջ 146:

հաւելում նաեւ գերեզմանատանը կառուցուած՝ Ճուկ Մարզեւպանի[20] հնագոյն սրբավայր Ս. Սարգիս վանքի մասին[21]:

Մինաս Խապրիկը, նկարագրելով գիւղի սրբավայրերը, անդրադառնում է Ս. Աստուածածին եկեղեցուն, ինչպէս նաեւ Չորք-Մարզպանից մէկ կիլոմետր հեռու՝ Ամանոս լեռան ստորոտում գտնուող Խարնուպլու վանքի մասին, որտեղ աւանդութեան համաձայն՝ բնակուել է Ս. Սարգիսը[22], ապա յաւելում, որ Օշաքլուի հայերը, սովորութեան համաձայն, գալիս էին Խարնուպլուի ուխտավայր եւ դիմում Ս. Մինասի բարեխօսութեանը[23]:

Ընդհանրապէս Ադանայի շրջանում խարնուպ[24] ծառատեսակը բաւական տարածուած է եղել: Դրանցով պատուած բլուրները յիշատակւում են հայերէն եղջերնուտ, իսկ թուրքերէն խարնուպլու (harnuplu) անուամբ: Ուստի, Եղջերնուտ կոչուած վայրով դժուար է յստակեցնել, թէ այս կամ այն բլրի վրայ յիշատակուող սրբավայրը որտեղ է գտնւում:

Այսպիսով՝ ակնյայտ է, որ աղբիւրներն ունեն թերութիւններ՝ մասնաւորաբար եկեղեցիների կամ ուխտավայրերի անուան եւ գտնուելու վայրերի առումով: Ս. Աստուածածին անուամբ եկեղեցին յիշատակւում է Կ. Պոլսի պատրիարքարանի կազմած ցուցակներում եւ միւս երկու աղբիւրներում: Գերեզմանատանը կառուցուած մատուռի մասին եւս տեղեկութիւններ կան՝ Ս. Մինաս եւ Ս. Սարգիս[25] անուններով: Երկրորդ եկեղեցին, ըստ ցուցակների, կրում է Ս. Գրիգոր Լուսաւորիչ անունը, միւս երեք աղբիւրներում յիշատակւում է Ս. Խաչ եւ Ս. Փրկիչ անուններով:

Բացի պատրիարքարանի ցուցակներից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ անուամբ եկեղեցու մասին յիշատակութեան հանդիպում ենք Մարտիրոս Տէր-Ստեփանեանի՝ 1945 թ. գրած բանաստեղծութիւններից մէկում, որի վերջին տողերում հեղինակը գրում է.

Այո՛, մոռնալ սկսայ Ամանոսիդ շուքն հեշտին,
Կաթոտ Կապոյտն Իսօսին, եղջերէնին Սուրբ Սարգսին,
Ու սիրելի դէմքերն ալ, որ հիմա հոն կը մընսին:

---

20 Ս. Պոռանեանը քաղաքն անուանում է Ճուկ Մարզուան: Ցրումներ անելիս նպատակայարմար գտանք գործածել հեղինակին հոգեհարազատ ձեւը:

21 Տե՛ս **Սամուէլ Պոռանեան**, նշ. աշխ., էջ 144-146, 235:

22 Տե՛ս **Մինաս Խապրիկ**, նշ. աշխ., էջ 11:

23 Տե՛ս անդ, էջ 56:

24 Խօսքը եղջերէնի կամ եղջիւրենի ծառի մասին է. թուրքերէնում harnuplu կամ keçi boynuzu: Այս ծառերով շրջապատուած վայրերը տեղացի թուրքերը անուանում են խարնուպլու, իսկ հայերը՝ եղջերնուտ:

25 Տե՛ս **Սամուէլ Պոռանեան**, նշ. աշխ., էջ 235:

Բայց ես մոռնալ չեմ կրնար քեզմէ ընդմիշտ երեք բան...
Եկեղեցւոյն մեր խոնարհ Լուսաւորիչն մօրուագեղ,
Նշանածս օրորոցի, եւ մեր տունին ճամբան անդ [26]...

Եթէ չլինէր այս բանաստեղծութիւնը, հեշտութեամբ կարելի էր ենթադրել, թէ պատրիարքարանի ցուցակներում Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու յիշատակումը սխալմունքի արդիւնք է: Սակայն, կարծում ենք, չորք-մարզուանցի բանաստեղծի այս տողերը ծննդավայրի մասին պատմող բացառիկ յուշագրական շարադրանք պէտք է համարել:

Ինչ վերաբերում է պատրիարքարանի կազմած ցուցակներին, ապա դրանք յոյժ կարեւորութիւն ներկայացնելու հետ մէկտեղ ունեն նաեւ թերութիւններ, քանի որ, ինչպէս երեւում է նրանցում արուած նշումներից, մի ամբողջ շրջանի եկեղեցիների ցուցակագրումը տեւել է ընդամենը մէկ օր (սիւնակում սեւագրութեան եւ մաքրագրութեան թուականները նոյն օրն են նշուած): Ցուցակներում ուխտատեղիների մասին որեւէ գրառում չկայ: Դուրս են մնացել մատուռները եւ փոքրիկ սրբատեղիները, բաց են թողնուած գրանցման ընթացքում աւերակ վանքերը, խոնարհուած եկեղեցիները, որոնք այդ ժամանակ արդէն ծառայում էին իբրեւ ուխտատեղի: Ներառուած չեն նաեւ համիդեան հրամաններով քանդուած եկեղեցիները, անուանափոխուած կամ թուրքացուած սրբավայրերը: Ինչպէս օրինակ՝ Քարաքիլիսայ (նշանակում է սեւ եկեղեցի) անուամբ սրբավայրը, որը գտնւում է Չորք-Մարզուանից երկու ժամ հեռաւորութեան վրայ՝ Քարավանքլը թուրքաբնակ գիւղի մօտ[27]:

Այսպիսով, ցուցակները կազմուած լինելով Արդարադատութեան եւ դաւանանքների նախարարութեան պահանջով՝ չեն բովանդակում եկեղեցիների, վանքերի, սրբավայրերի եւ ուխտատեղիների քանակի վերաբերեալ ճշգրիտ տեղեկութիւններ: Դրանց հիմնական նպատակը ցեղասպանութեան համար տարուող նախապատրաստական աշխատանքներն են եղել, հետեւաբար ցուցակների մէջ ներառուել են բացառապէս գործող, նիւթական արժէք ներայացնող եկեղեցիները:

Ս. Աստուածածին (Չորք-Մարզուանի Վերի թաղ). Չորք-Մարզուանի յայտնի սրբավայրն է Ս. Աստուածածինը: Այս անուամբ կայ երկու եկեղեցի: Առաջինը՝ Ումրանիյէ գաւառակի Էօզերլի գիւղում, երկրորդը՝ Չորք-Մարզուանի Վերի թաղում: Էօզերլիում գտնուող եկեղեցու կառուցման թուականը պատրիարքարանի ցուցակներում նշուած չէ: Ցուցակներից քա-

26 **Թորոս Թորանեան**, Չորք մարզպանցի հայ գիրի եւ մամուլի դէմքեր, Պէյրութ, 1987, էջ 100:
27 Տե՛ս **Սամուէլ Պոռանեան**, նշ. աշխ., էջ 21:

ղուած տեղեկութեան համաձայն՝ գիտենք միայն, որ հին կառոյց է[28], ենթադրում ենք նաեւ, որ կոտորածներից առաջ եղել է կանգուն եւ գործող եկեղեցի:

Եկեղեցին եռախորան է, կոչում է նաեւ վերի եկեղեցի[29]: Կառուցուել է հիջրայի 1267 թ. (1851-1852)[30]:

Ս. Աստուածածին եկեղեցու կառուցումը կապուած է ԺԹ. դարի պատմական իրադարձութիւնների հետ, երբ Չորք-Մարգուանի աւագանին տեսնում է, որ ժողովուրդը գնալով բազմանում է, եւ կարիք է առաջանում կառուցելու նոր ու ընդարձակ մի ուխտատեղի[31]:

Օսմանեան կառավարութեան հետ առաջացած դժուարութիւնները յաղթահարելով՝ կառուցում է Ս. Աստուածածինը, որի գմբէթները բաւական բարձր էին եւ տեսանելի անգամ շատ հեռուից: Մեծութեան պատճառով հարեւան թուրքերը եկեղեցին կոչել են Բէօյիւք քիլիսէ (Մեծ եկեղեցի)[32]:

Ս. Աստուածածինը քարաշէն է: Գմբէթը զարդարուած է վեցթեւեան խաչով, որի ներսի կողմում Արարչի իւղաներկ նկարն է, իսկ գմբէթից փոքր-ինչ վար՝ չորս սիւների կամարների վրայ, նկարուած են չորս Աւետարանիչները, Ռտնլուայի պահն ու Գեթսեմանի պարտէզում Քրիստոսին ձերբակալելու տեսարանները[33]:

Խորանի մէջտեղում նկարուած են վերջին դատաստանի մասին զգուշացնող երկու հրեշտակ: Պատերն ու ձեղունը ծածկուած են բուսական նախշերով: Սրբազան աւազանը զարդարում է Ս. Գրիգոր Լուսաւորչի խոշոր կտաւը, որը ինչպէս եւ եկեղեցու միւս բոլոր կտաւները, արուած է իւղաներկով[34]:

Եկեղեցին կառուցուել է Տէր Մինասի օրոք՝ Արթին Քեհեայի, Հաճի Գէիւք Պալեանի, Սարգիս Գարավարդանեաի, Գարա-Սարգիս Գոճայեանի, Սարգիս Խըտըրեանի եւ ուրիշների անխոնջ նուիրումի շնորհիւ: Կառուցող վարպետներից յայտնի է Ռուբինեան Պարսամ ուստան[35]:

Մասնակի նորոգութիւնները յաճախ իրականացում են առանձին անձանց կողմից, ովքեր այս կամ այն հիւանդութիւնից ազատուելու համար ուխտ են անում վերակառուցել սրբավայրը, նկար, խնկաման նուիրել: Երբեմն էլ

28 Տե՛ս «Էջմիածին», 1965, Ա., էջ 61:
29 Տե՛ս **Սամուէլ Պոռանեան**, նշ. աշխ., էջ 145:
30 Տե՛ս «Էջմիածին» 1965, Ա., էջ 61:
31 Տե՛ս **Մինաս Գոճայեան**, նշ. աշխ., էջ 142:
32 Տե՛ս անդ:
33 Անդ:
34 Տե՛ս անդ:
35 Անդ:

արդիկ, տեսած երազին հաւատալով, որեւէ նուիրատուութիւն են կատարում, մասնակցում եկեղեցու համար նախաձեռնած բարեկարգութեանը [36]:

Ս. Աստուածածին եկեղեցու բակում կա երեք այլ շինութիւն եւս. դպրոց՝ կառուցուած Միացեալ ընկերութեան կողմից, մանկապարտէզ, որ կառուցուել էր ԺԹ. դարի առաջին կէսին, թաղական ու հոգաբարձուական մարմինների ժողովների համար նախատեսուած՝ երեք սենեակից բաղկացած շէնքը առաջնորդարանի, որի պաշտօնեաների իրաւասութիւնն է Չորք-Մարզուանի հայ բնակչութեան ներքին դատերը եւ վէճերը լուծել, ղեկավարել դպրոցական եւ եկեղեցական կեանքը[37]:

Եկեղեցուց դէպի քաղաքի արեւելեան մաս, որը վերջանում է դաշտի մէջ[38], գտնւում է տեղի միակ արդիական կառուցուած շէնքը՝ երկյարկանի Քելեկեան որբանոցը:

Ինչպէս վերը տեսանք արդէն, Ս. Աստուածածին անունով եկեղեցի է գոյութիւն ունեցել նաեւ քաղաքին մօտակայ Էօզերլի գիւղում: Պատրիարքարանի ցուցակներից քաղուած տեղեկութեան համաձայն՝ գիտենք միայն, որ հին կառոյց է[39], ենթադրում ենք նաեւ՝ 1895-ի համիդեան կոտորածներից առաջ եղել է կանգուն եւ գործող եկեղեցի:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ (կամ Ս. Փրկիչ). Չորք-Մարզուան գաւառակում Ս. Գրիգոր Լուսաւորիչ անուամբ երկու եկեղեցի կայ: Առաջինը կառուցուել է Չորք-Մարզուան քաղաքում հիջրայի 1274 թ. (1857-1858), երկրորդը՝ Էօզերլիում, հիջրայի 1294 թ. (1877-1878)[40]: Էօզերլիի եկեղեցուն կից գործել է նաեւ Ս. Փրկիչ անուամբ դպրոց[41]:

Թէպէտեւ Պատրիարքարանի կազմած ցուցակներում Չորք-Մարզուանի երկրորդ եկեղեցին կրում է Ս. Գրիգոր Լուսաւորիչ անունը, յուշագիրների մօտ յիշատակւում է Ս. Խաչ կամ Ս. Փրկիչ անունով:

---

36 «Նիկ Մարզուան» վերնագրուած ձեռագիր, Քըրքիսան, 1934, էջ 123, հեղինակը՝ անյայտ: Հետաքրքիր աշխատութիւն լինելով հանդերձ՝ չափազանց դժուարընթեռնելի է եւ կարիք ունի մանրակրկիտ ուսումնասիրութեան: Այս գրքոյկից որոշ էջեր թուայնացուած մեզ է փոխանցել Սիրանոյշ Մինասեանը, որին եւ յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը:

37 Ինչպէս տեսնում ենք դատավարութիւնների ընթացակարգի մասին Մինաս Խապրիկի նկարագրութիւններից, Չորք Մարզուանը եղել է բաւականաչափ անկախ թուրքական իշխանութիւններից: Բացի ծանր ոճրագործութիւններից, մնացած բոլոր վէճերն ու տարակարծութիւնները լուծուել են տեղում՝ թաղային խորհրդի կողմից՝ առանց թուրքական իշխանութեան միջամտութեան. տե՛ս **Մինաս Խապրիկ**, նշ. աշխ., էջ 34, 44:

38 Միջերկրական ծովից մինչեւ Ամանոսեան լեռների ստորոտ ձգուող այս դաշտը Չորք Մարզուանը բաժանում է Էօզերլի եւ Ղարաբիլիսայ գիւղերից:

39 Տե՛ս «Էջմիածին», 1965, Ա., էջ 61:

40 Անդ:

41 Տե՛ս **Osman Koker**, 100 yıl önce Türkiyede Ermeniler, Birzamanlar yayıncılık, Istanbul, 2005, էջ 243:

Կարծում ենք՝ եկեղեցին տեղացիները այնուամենայնիւ կոչել են Ս. Փրկիչ: Ըստ գրաւոր աղբիւրների՝ ծխատէր հոգեւորականները եւս բաշխուած են ըստ Ս. Աստուածածին եւ Ս. Փրկիչ եկեղեցիների[42]:

Վերի եւ վարի թաղի եկեղեցիների անուան հարցում մէկ կարեւոր պարզաբանում ստանում ենք Ադանայի հայոց առաջնորդ Մուշեղ Ծ. վրդ. Սերոբեանի (1905-1909) ինքնակենսագրութիւնից[43]: Մուշեղ վարդապետը, Չորք-Մարզուան կատարած իր այցելութեան առթիւ, ներկայ լինելով եկեղեցական ընտրութիւններին՝ երկու եկեղեցիները անուանում է Ս. Աստուածածին եւ Ս. Փրկիչ[44]:

Այս տեղեկութիւնները կասկած չեն թողնում, որ Վարի թաղի եկեղեցին տեղացիներին ծանօթ է եղել Ս. Փրկիչ անուամբ:

Ս. Մինաս եւ Ս. Սարգիս. Այս մատուռի անուան եւ նրա գտնուելու վայրի վերաբերեալ կան հակասական տեղեկութիւններ: Գոճայեանը նշում է, որ մատուռն առանձնանում է բակի խարնուպ կոչուած ծառով: Մինաս Խապրիկը յիշատակում է Խարնուպլիի ուխտավայրը՝ մատնանշելով նրա պահապան Ս. Մինասի անունը: Նոյն հեղինակը մէկ այլ հատուածում յիշատակում է Խարնուպլի կոչուած մի ուխտավայր, որտեղ ապրել է Ս. Սարգիսը[45]:

Գերեզմանատանը կառուցուած մատուռի մասին Ս. Պոռանեանը գրում է. «Ս. Սարգիս եկեղեցին քաղաքի ամենահին կրօնական հաստատութիւնը լինելով՝ ձեռք է բերել ուխտատեղիի բնոյթ: Քաղաքացիները տօնական օրերին, խուռն բազմութեամբ յաճախում են այս ուխտատեղին, մորթում մատաղներ ու կազմակերպում խրախճանք: Մեծ բազմութիւն է հաւաքւում յատկապէս Տեառնընդառաջի տօնին»[46]:

Մենք աւելի հակուած ենք կարծելու՝ երրորդ եկեղեցին, որը գտնուել է գերեզմանատանը, կրել է Ս. Սարգիս անունը՝ յղում կատարելով այն մէջբերմանը, որ Չորք-Մարզուանի պահապան սուրբը եղել է Ս. Սարգիսը: Հակուած ենք կարծելու նաեւ, որ Գոճայեանի նշած Ս. Մինաս մատուռը գտնուել է Օջաքլուում, քանի որ Մինաս Խապրիկը վկայում է, որ Խարնուպլի կոչուածուխ-

42 Տե՛ս **Սամուէլ Պոռանեան,** նշ. աշխ., էջ 147. Մինաս Գոճայեան, նշ. աշխ., էջ 147:

43 Տե՛ս **Մուշեղ Սերոբեան**, Ինքնակենսագրութիւն (անտիպ), տետրակ Բ., էջ 313: Այս տետրակից մի քանի թուայնացուած էջ մեզ է տրամադրել «Օսմանեան հայերու բնաշխարհը վերականգնելու ծրագիր» իրականացնող «Յուշամատեան» կայքի պատասխանատու խմբագիր Վահէ Թաշճեանը, ում յայտնում ենք մեր խորին երախտագիտութիւնը:

44 Անդ:

45 Տե՛ս **Մինաս Խապրիկ**, էջ 11, 56:

46 Տե՛ս **Սամուէլ Պոռանեան**, նշ. աշխ., էջ 129, 146:

տավայրում երիտասարդները ծառից կախում էին թաշկինակներ՝ Ս. Մինասի բարեխօսութեամբ երազանքները ի կատար ածուելու հաւատքով[47]:

Աւետարանական ժողովարան. Չորք-Մարզուանի հայութեան՝ Հայ Եկեղեցու եւ ազգային աւանդութիւնների հանդէպ ունեցած նախանձախնդրութեան մասին վկայող փաստ կարելի է համարել յարանուանական եկեղեցիների հանդէպ ցուցաբերուող վերաբերմունքը. հայ կաթոլիկ համայնք գոյութիւն չունի առ հասարակ:

Ինչ վերաբերում է աւետարանականներին, համայնքը հաւաքւում էր Չորք-մարզուանցի Դելի Գէորգեան Խաչերի բնակարանում: Աւելի ուշ, դաւանափոխ Նազարէթ Մագասճեանը սեփական պարտէզում բացում է երկրորդ ժողովարանը: Առաջին հարկը կառուցւում է, սակայն խիստ բողոքի պատճառով կառավարութիւնը դադարեցնում է շինարարական աշխատանքները: Վերջապէս, պատուելի Սարգիս Թորեանի միջամտութեամբ եւ ջանքերով աւարտւում են ժողովարանի շինարարական աշխատանքները[48]:

Այս ժողովարանը գտնւում է Չորք-Մարզուանի Վերի թաղում[49]: Աւետարանական համայնքի երկրորդ ժողովարանը գտնուել է Էօզերլիում:

Ս. Գէորգ ուխտավայր. Չորք-մարզուանցիների յաջորդ սրբավայրը Ս. Գէորգն է, որը գտնւում է Եղջերնուտ կոչուող լանջի վրայ՝ քաղաքի հիւսիսային մասում: Այն չորս պատերն ու խորանը տակաւին կանգուն եկեղեցի է: Մեծ մայրերը պատմում են, որ եթէ անհրաժեշտ է լինում, Ս. Գէորգն իր առասպելական ու հրաշագործ նիզակով այս եղջիւրները նետի է վերածում ու տեղում գամում Պերեքէթ լեռան աւազակներին[50]:

Ս. Սարգիսի Քար. Հինաւուրց Ս. Սարգիս կրօնական հաստատութիւնից բացի, Չորք-Մարզուանում պայտի ձեւ ունեցող մի ժայռաքար կայ, որի մասին բերնէբերան փոխանցուած աւանդոյթը այս կերպ է հասել մեզ. Բիւզանդական կայսրից փախուստի է դիմում Ս. Սարգիսը՝ ձիու վրայ տանելով նաեւ իր Մարտիրոս որդուն, կամ մէկ այլ աւանդութեան համաձայն՝ կայսեր դստերը, ով փրկել էր իրեն մահից[51]: Փախուստի ճանապարհը անցնելիս է եղել Չորք-Մարզուան բերդաքաղաքով, իսկ Ս. Սարգսի սպիտակ ձիու պայտը սրընթաց արշաւի ժամանակ հետք է թողել մի սեւ քարի վրայ:

Տեղացիները, հարեւան բնակավայրերի երիտասարդները, հաւատալով քարի մէջ ջուր լցնելու, խմելու եւ առողջանալու հրաշագործութեանը, մեծ

47 Տե՛ս անդ, էջ 56:
48 Տե՛ս **Սամուէլ Պոռանեան**, նշ. աշխ., էջ 155:
49 Տե՛ս **Մինաս Խապրիկ**, նշ. աշխ., էջ 28:
50 Տե՛ս **Մինաս Գոճայեան**, նշ. աշխ., էջ 37:
51 Անդ:

բազմութեամբ գալիս են Կոյր Ջրաղաց կոչուած բլրի, ծեր եղջերէնու տակ գտնուող Ս. Սարգսի քարին ուխտի: Մեծ բազմութիւն է հաւաքւում յատկապէս սրբի տօնին: Ընդունուած սովորոյթի համաձայն՝ այդ օրը մատաղ են անում, աքլորի կամ ոչխարի մսով եփած նոխուտլու պուլղուր փիլաւ (սիսեռով ձաւարի փլաւ) պատրաստում[52]:

Յիշատակենք Ս. Սարգսի Քարի գործած հրաշքներից մէկը՝ ըստ Մինաս Գոճայեան յուշագրի. Երկու թուրք զինուոր գիշերը սրբավայրի մօտով անցնելիս նկատում են դրա մօտակայքում աճած հսկայական մրտէնին՝ վրան կապկպած կերպասի զանազան կտորներ: Զինուորները կռահելով, որ քրիստոնէական սրբավայրի մօտով են անցնում՝ որոշում են պղծել այն: Մէկը իջնում է փոսը ու աղտոտում այնտեղ, սակայն նոյն վայրկեանին իսկ անշարժանում, քարանում է: Միւս զինուորը ձիավարում է զօրանոց ու օգնութիւն կանչում: Այստեղ եկած հրամանատարը կարգադրում է անմիջապէս մաքրել փոսը, ապա ջուր լցնել ու երեք անգամ խմեցնել զինուորին: Ականատեսները պատմում են, որ հրամանատարի պահանջը կատարելուց յետոյ Ս. Սարգսից զարնուած զինուորը բուժւում է:

Ասար Դէդէի սրբավայրը. Եղջերնուտ կոչուած բլրի հարաւային կողմում է գտնւում մէկ այլ սրբավայր, որին թէ՛ հայերը եւ թէ՛ թուրքերը վերաբերում են ակնածանքով[53]: Ասար Դէդէի սրբավայրը եւս փլատակ եկեղեցի է, որի ներսում կայ մի ակ: Տեղացիները հաւատում են, որ երաշտի ժամանակ աղօթքներով նետած քարերը կարող են անձրեւ բերել[54]:

Քիլիսեջիք (Քարաքիլիսայ). Քաղաքի հարաւարեւելեան կողմում՝ երկու ժամ հեռաւորութեան վրայ գտնւում է Քիլիսեջիք կամ Քարաքիլիսայ կոչուող վանքի աւերակը, որի շուրջը աւերուած բնակավայրի մնացորդները դեռեւս տեսանելի են[55]: Այս սրբավայրին առընթեր գտնւում է Քարավանքը անուամբ թուրքական գիւղը: Այլ տեղեկութիւն այս սրբավայրի մասին մեզ չի հասել:

52 Տե՛ս անդ:
53 Անդ:
54 Տե՛ս Անդ:
55 Տե՛ս **Սամուէլ Պոռանեան**, նշ. աշխ., էջ 21:

SUMMARY

The province Chker is one of the settlements in Cilician Armenia where there are a lot of churches. Chork-Marzvan being one of the provinces populated with Armenians, had numerous churches and monasteries, which have never been as a subject of research. In the XIX century many of these sanctuaries were in ruins, and became pilgrimages. The aim of this article is to gather up Chork-Marzvan pilgrimages and make the number and names of the churches more precise. On the basis of three unprinted sources as well as many other printed sources and memoirs referring to Chork-Marzvan.

РЕЗЮМЕ

Провинция «Чкэр» - богатое церквями селение, находящееся на территории Киликийской Армении. Один из районов провинции, «Чорк-Марзван», имеющий густое армянское население, известен своими многочисленными церквями и монастырями, которые никогда не становились предметом изучения. В 19 веке большая часть этих святынь уже стала руинами и считалась местом паломничества. Основываясь на трех рукописных первоисточниках и на иных источниках, посвященных «Чорк-Марзвану», а также на напечатанные воспоминания о памятнике, в настоящей статье сделана попытка обобщить места паломничества «Чорк-Марзван», а также сделать некоторые уточнения в связи с количеством церквей и их названий.